են բավարարման:

Ամփոփելով՝ Դատարանը եզրահանգում է, որ հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

_

<u>Դատական ծախսերի բաշխման հարցը</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է բավարարման, իսկ Հայցվորի կողմից նախապես 698,700.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, սակայն՝ գրավոր միջնորդության տեսքով դատական ծախսերի հետ կապված պահանջ չի ներկայացրել, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2024թ. թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումը՝ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու, հայտի ապահովման գումարը գանձելու, գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասով, անվավեր ճանաչելու և որպես հետևանք հայտը գնման ընթացակարգի /մրցույթի/ պայմաններին բավարար գնահատելու և վերջինիս՝

որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2024թ. թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումը՝ կապված ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու, հայտի ապահովման գումարը գանձելու, գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հետ:

«ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊ ընկերության հայտը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված և «ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊ ընկերությանը թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am